



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տպածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ԲԱՅԱՐՈՎԻ ՅԵՎ Ա. ԿՈՐՉԵՎԻ

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՏ
 ՅԵՎ
ԶԵՎՈՎԱՐԵԼ,
ԿՈԼՏՆՏԵՍԵՍՈՒԹՅՈՒՆ

ԲԱԿԻՔԻԹՅՈՒՆ
ԿՈՄՄՈՒՆԻ
ՀՐՑԵԼ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1930



Ա. ԲԱՅՐՈՒԿԻ ՅԵՎ Ա. ԿՈՐՉՈՒԿ


338.1K

Դ

ՀԱՅՈՒՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՅԵՎ ԶԵՎԱՎՈՐԵԼ
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ
(ԿՈՄՄՈՒՆԻ, ԱՐՏԵԼ, ԸՆԿԵՐՈՒՔՅՈՒՆ)

(Բարգավաճութ և սուսաբեն չորրորդ բարեկփոխված և լրացված
հրատարակությունից)

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՄԱ ԱԿՈՒԹՅՈՒՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿԵՆՔՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ - 1930



Ա. ԲԱՅՐՈՒԿԻ ՅԵՎ Ա. ԿՈՐՉՈՒԿ

338.1K

Р




ԻՆՉՊԵՍ ԿՈԶՄԱԿԵՐՊԵԼ ՅԵՎ ԶԵՎԱՎՈՐԵԼ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

(ԿՈՄՄՈՒՆԱ, ԱՐՏԵԼ, ԸՆԿԵՐՈՒՅՑՈՒՆ)

(Քարգմանված և ուսուելին չորրորդ բարեփոխված և լրացված
հրատարակությունից)

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՎԿՈՒԹՅՈՒՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ - 1930

Հրատ. № 1224

Դրառեալ. № 4063 (բ) Պատ. № 279 Տիրաժ 5000

Պետհրատի Յերկրորդ Ցոլարան Յերևանումում

Կրկնակի և յեռակի տնդամ՝ կբարձրա-
նար աշխատանքի արագրողականու-
թյունը, կրկնակի և յեռակի տնդամ
կտնահսվեր մարդկային աշխատանքը,
յիթե բաժան-բաժան մանր-պյուղացիա-
կան տնտեսությունից անցում կատար-
վեր զեսպի համայնական տնտեսությունն

Լենին

ԱՌԱՋԱԲԱՆ

Խորհրդակին իշխանությունը գյուղում հիմնական
խնդիր համարում և զյուղատնտեսության բարձրա-
ցումը և գյուղացիական չքավոր և միջակ խավերի
տնտեսական զբության բարելավումը:

Այդ նպատակով Վ. Ի. Լենինն ստեղծեց գյուղա-
ցիական տնտեսության կոոպերացման պլանը, իսկ
Համեր(բ)կ 15-րդ համազումարն այդ պլանն իրագոր-
ծելու համար ընդունեց մի շարք վորոշումներ:

Բաժան-բաժան չքավոր-միջակ տնտեսություն-
ներին ողնություն կաղմակերպելը դժվար գործ և և
այդ նպատակով ձեռնարկվուծ միջոցների սեծագույն
մասն սպասված արդյունքները չեն կարող տալ, մինչև
վոր իրենք չքավորները և միջակները չկազմակերպ-
վեն կոլեկտիվացման դադարիաբները մուտք են գոր-
ծել գյուղը և անմիջականորեն շահագրղուել են չքա-
վորներին և միջակներին նրանք ըմբռնել են, վոր

կոլլեկտիվների մեջ կազմակերպվելով իսենք կարող են ազատվել մշտական կարիքից և կուլտակից կախում ունենալուց:

Թիեզորքան մեծ է միացման ձգտումը զբուղացիության մեջ, այդ յերեսում և կազմակերպված կոլլեկտիվների թվոց՝ 1928 թ. վերջները Խորհրդային Միության մեջ լեզել և մոտ 37,000 կոլտնտեսություն, վորոնց մեջ մտել են 510,000 ծուխ 2,000,000 հեկտար տանքսի—տարածությամբ:

Միջին հաշվով կոլտնտեսություններում չքավորները կազմում են 70 տոկոս, միջակները՝ 29 տոկոս, ունիորները՝ 1 տոկոս. Այդ թվերը ցույց են տալիս, վոր կոլտնտեսությունների մեջ միանալու ամենամեծ ձգտումն ցույց են տալիս չքավորները, իսկ ունիորները պատահում են վորպես բացառություն:

Ի՞նչ և կոլտնտեսությունը, ի՞նչորեւ և նու կազմակերպվում և որենքով ձևակերպվում—սրանք խնդիրներ են, վորոնք ներկայումս հետաքրքրում են զյուղացիներին և գյուղին մոտ լեզող հաստրակական աշխատավորներին:

Այս ձևնարկի նովատուակն և անոլ ալտրով և հոկիրճ ձեռվ կոլտնտեսության մասին պարզ հասկացողություններ և բացարկել առաջացող կոլտնտեսությունների կազմակերպման և ձևակերպման որենքով հաստաված կաբդերը:

ԻՆՉՔԻ ՀՅՈՒՄ ԵՆ ԿԵԶՄԱԿԵՐՊՈՒԹ ԿՈԼՑՆՑԵՍԱԻ- ԹԾՈՒՆՆԵՐԸ

Ինչքան խոշոր և կայտն և անտեսությունը, ինչ-
քան շատ և ապահովված նա անհրաժեշտ միջոցներով,
այնքան ավելի լավ հետեանքներ են ստացվում անձ-
նական ֆիզիկական աշխատանքի գործադրումից: Բնդ-
հակառակը, թույլ, մանր անտեսությունները, նույնիսկ
ավելի աշխատանք գործադրելով, չեն կարողանում
հոմնել այն արդյունքներին վոչ քանակի և վոչ ել
վորակի տեսակետից, ինչ վոր ունենում են խոշոր և
կայտն անտեսությունները: Հասկանալի յե, վոր բոլոր
գյուղացիական անտեսությունները չի կարելի անհա-
տական սդատադրժման պայմաններում գարձնել խոշոր,
առաջին ներթին գրա համար կպակասեր հողը:

Եեթե առանձին անհատական անտեսություն-
ները հնարավորություն ստանան խոշորանալու, ապա
նրանց մեծանալը կլիներ իհաշիվ ուրիշների քայլքայ-
ման: Այդճանապարհով հն ստեղծվել կուլակային տըն-
տեսությունները:

Անհատական անտեսությունների այդ ձևով խո-
շորանալու հետեանքով շըջակայքի գլուղացիները
զրկվել են հողից ու շահագործվել, և ինչքան շատ
հարստացել կուլակը, այնքան ավելի քայլքայվել են
աշխատավոր գյուղացիական անտեսությունները: Դա
անտեսության խոշորացման մի միջոցն է, վորը կա-

տարվում ե միլիոնավոր գյուղացիների քայքայման գնով, այդ պատճառով ել նա Խորհրդավին Միության մեջ թուլատրելի չե:

Խոշոր տնտեսության անցման մյուս ճանապարհն ե փոքր տնտեսությունների միացումը կոլտնտեսությունների մեջ, այսինքն գյուղի ողջիալիստական զարգացման ճանապարհը:

Թե ինչու համար ե հարկավոր խոշորացնելուն-տեսությունը, և ինչպիսի առավելություններ ունեն խոշոր կոլլեկտիվները փոքրերի նկատմամբ, յերեսում ե հետեւյալ որինակներից: Տնտեսությունը ինչքան շատ ե խոշորանում, այնքան հողի մշակման համար գործադրվող ժամանակն աշդյունավետ ե ոգտագործվում:

Հաստատված ե, վոր մեկ հեկտար մշակելու համար պահանջվում է՝

5 հեկտ.	ունեցող տնտեսություններում՝	70 բանվ.	որ
10	»	50	»
50	»	15	»

Մանր տնտեսության մեջ հնարավոր չե գյուղատնտեսական ինվենտարն ամբողջությամբ ոգտագործել, անգամ հնարավոր չե գործիքների լրիվ ոգտագործումը, ել չինք խոսում խոշոր, բարդ մեքենաների մասին: Այս գեղքում հողի ստհմանափակվածությունը թուլլ չի տալիս մանր տնտեսություններում գործադրել բարդ մեքենաներ, և գյուղացիներն ամեն տեսակ աշխատանքներ պետք ե կատարեն ձեռքով, վորը շատ ժամանակ և պահանջում, և աշխատանքն ել ծանր և լինում: Համայնացված խոշոր տնտեսություններում հեշտ և գյուղատնտեսական մեծ մեքենաներ ձեռք բերելը և լրիվ ոգտագործել ալդպիսի-

ները, ինչպիսին ևն՝ ցանող, հնձող, կալսող մեքենա-ները և, վերջապես, տրակտորը:

Տնակառություններում դյուղատնտեսական մեքենաների գործադրումը գործն արագացնում է, և աշխատանքը պահանջում է զգալի չափով պակաս աշխատանք։ Մեքենաների գործադրման առավելությունը կարելի յէ տեսնել հետեւյալ հաշիվներից։

Մեկ տասն (61 փ.) ցոլին ծհծելու համար անհրաժեշտ է ծախսել՝

2 կամիով մոտ 4 հոգու 40 բանվ. ժամ
արտեկտորով 10 > >

Անհատական տնտեսություններում այժմ հենց
ձի պահելը գառնում և վոչ ձեռնուու, քանի վոր նրա
աշխատանքի լրիով ողբարբոքումն անհնար եւ

Միջակ անահսության մեջ յուրաքանչյուր ձիռն ընկնում է 2—3 հեկտար վարելանող, այն ինչ մեկ ձիռվ կարելի լի մշակել 8 հեկտար:

Միքանի մանր անտեսություններից մեկը խոշոր անտեսություն կտղմակերպելու դեպքում կարելի է ձիաների թիվը պահանջնել: Իսկ մնացածներին ոգագործել լրիդ աշխատանքով: Այն կերը, վոր պիտի գնար ավելորդ ձեերի պահելուն, կարելի է ողտագործել կաթնառու անասունների թիվը ավելացնելու համար:

Գոլություն ունեցող մանր տնտեսություններում

շինություններ շատ կան. նրանք թանգ են նստում, սակայն միաժամանակ նրանք չունեն այն հարմարությունները, վորոնք անհրաժեշտ են մարդկանց բնակության և կենդանիներ սլահելու համար:

Մանր տնտեսության մեջ, մեկ հեկտարի հաշվով, ավելի շատ շինություններ են ընկնում, քան խոշորներում:

Շինությունների արժեքը, մեկ հեկտարի արժեքով, տնտեսություններում արտահայտվում է հետեւյալ կերպ՝

Յ հեկտար տարածություն ունեցող տնտեսության
մեջ 400 ռ.

12	»	»	»	»	»	»	200	»
60	»	»	»	»	»	»	120	»
300	»	»	»	»	»	»	100	»

Սովորաբար 20 տնտեսություններին պատկանող 50 հեկտար վարելահողին 100 շենք ե ընկնում՝ թե բնակելի և թե տնտեսական՝ վերցրած միասին: Ըստ ազգայնակության թվի լուրաքանչյուր հոգուն մեկ շինություն ե ընկնում:

Այդ շինությունների արժեքը հասնում է 25,000 ռուբլու: Այդ գրամով կոլտնտեսության մեջ կարելի յէ կուլտուրական տնտեսության բոլոր պահանջներին բավարար կատարելապես հարմար շենք կառուցել:

Ինչպէս կառուցել ե պահել 20 ախոռներ անասունների համար, յերբ հնարավոր ե պակաս ծախսով մեկ տաք լուսավոր շենք կառուցել բոլոր հարմարություններով՝ անասուններին ավելի լավ պահելու համար:

Եթե քսան մանր տնտեսություններում, անասուններին նայելու համար, հարկավոր ե 20 մարդ,

համայնացման դեպքում այդ գործը կատարելու համար 5 մարդ բավական են:

Կանոնավոր պահելը, նայելը և կերակրելը հեշտ է իրադրժել համայնացրած տնտեսության մեջ, վորի հետեանքով տվելանում և կաթնատվությունը, և հետեապես անտառնից ստացվող լեկամուտը:

Այդ և ուրիշ նման որինակներից, վոր լուրաքանչյուրը կարող է փորձել՝ խոշոր և մանը տնտեսություններն իրար հետ համեմատելու դեպքում, լերեվում է, վոր մանր տնտեսություններից խոշորներ ստեղծելը մեծ ոգուաններ կրերեն:

Կորանտեսություններ կազմակերպելիս հարկավոր է ձգտել ավելի շատ անտեսություններ մըացնել, այն հաշվով, վորպեսզի վարելահողի քանակը բավական լինի խոշոր գլուզատնտեսական մեքենաներ գործողելու համար:

Տնաեսությունների համայնացման դեպքում հաճախ լինի թաղաքում է, վոր անհատական հարաբերությունները կորվեն, կվատանան, բայց նման տարակուսանքները հիմքեր չունեն:

Ելութական գրության լավացումը, շահերի ընդհանրությունը, փոխադարձ ողնությունը, կուլտուրական մակարդակի բարձրացումը և համայնացված աշխատանքի ու միջոցների դրական այլ կողմերը, կարճ ժամանակ անցնելուց հետո, կստեղծեն խելացի ընկերական հարաբերություններ, և հետզհետե հարեանտեկան մանր հաշիվներից տարիներով կուտակված նտխանձը և թշնամանքը կվերանան, կչքանոն: Հարկավոր և միայն խելացիորեն կազմակերպել տնտեսությունը և հավասարաբար բաշխել աշխատանքը:

ԿՈՂՑՆՑԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Միասնաբար տնտեսություն վարելու համար կազմակերպվում են «գյուղատնտեսական կոոպերատիվ միավորութներ», վորոնք այլ կերպ կոչվում են (կոլլեկտիվ տնտեսություններ) կամ կարճ «կոլտնտեսություններ»:

Կոլտնտեսությունները բաժանվում են կոմմունաների, արտելների և հողի համայնական մշակման ընկերությունների:

Կոլտնտեսությունների բոլոր այդ տեսակներն իրենց միավորման աստիճանով կարող են մեկը մյուսին մոտենալ. այսպես, որինակ, խոշոր ընկերությունները մոտենում են արտելներին, արտելները կոմմունաներին են մոտենում և ընդհակառակը:

Հողի համայնական մշակման ընկերությունները կոլտնտեսությունների ամենահասարակ ձևն են հանդիսանում և կազմակերպվում են գյուղատնտեսական հիմնական աշխատանքները (վարը, փոցխումը, աղբավագութը, ցանքը, հունձը և կալը) միասնաբար կատարելու համար:

Ավելի լրիվ ձևով միանալու դեպքում միասին կատարվում են նաև խոտհարքը:

Բացի հողերի միացնելից և աշխատանքը միասին կատարելուց, ընկերությունները կարող են միասնաբար ձեռք բերել և ոգտագործել գյուղատնտեսական մեջենաներ և այլ գործիքներ:

Բանող և կաթնատու անասունների համայնացնելը պարտադիր չե, և նրանք կարող են մնալ առանձին տնտեսություններին՝ ոգտվելու համար:

Շինությունները մնում են առանձին տնտեսություններին՝ ողավելու համար։ Մի քանի տնտեսական շինություններ կարող են համայնացվել՝ միասնաբար սերմ, ինվենտար, մեքենաներ պահելու համար և այլ նպատակներով։

Ընկերության կազմի մեջ մտնող յուրաքանչյուր անտեսությունն գյուղատնտեսական աշխատանքներից ազատ ժամանակն աշխատում և ինքնուրույն, ընկերությունից անկախ։

Առեւելները հողն ամբողջությամբ համայնացնում են, նրանում լեզած աշխատանքը, տնտեսական շինությունները, ինվենտարը և անասունը, բայց իր տնալին անտեսությունն մեջ յուրաքանչյուր ընտանիք մնում և անկախ։

Բայց վարելահողերի ընդհանուր մշակությունից, արտելները խորհարքը միամնաբար են կատարում և ունենում են ընդհանուր բանջարաբուծական և այգեպործական տնտեսություն։

Բանող, կաթնատու և մանր անասուններն ամբողջությամբ են համայնացվում և կազմում են արտելի և վոչ թե նրա առանձին անդամների սեփականությունը։ Անասունները մնում են ընդհանուր կոմում, նրանց նաև կարող աշխատանքը կատարվում է ընդհանուր աշխատանքի կարգով, այդ նպատակով նշանակված առանձին անդամների կողմից։

Բոլոր անտեսական շինություններն ոգտագործվում են ընդհանուր կարիքների համար։ Բնակելի շինությունները նույնական կարող են համայնացվել։ Այդ գեպքում նրանք դառնում են վողջ արտելի սեփականությունը և առանձին ընտանիքներին տրվում

են ոգտվելու համար։ Հպմալնացված շինությունների կառուցումը և նորոգումը կատարվում ե արտելի միջոցներով։

Յեթե կան ազատ բանվոր ձեռքեր, վորոնչ տընտեսության մեջ չեն կարող ոգտավործվել, այդ դիպում թուլատրվում ե արտելի առանձին անդամներին գնալ վարձու աշխատանքի, ընդհանուր ժողովի հասաւատած պայմանների հիման վրա։ Աշխատանքի մի մասը գնում ե անձնական կարիքների գոհացման, իսկ մնացածը մտնում ե արտելի տրամադրության տակ։

Կոմմունան մեկ ամբողջական համայնացված անտեսություն ե, այդ բառի իսկական և ամբողջական իմաստով։

Կոմմունայի անդամների անհատական տնտեսություններն ամբողջությամբ լուծարվի յեն յենթարկվում։ Անդամներին պատկանող գույքն անցնում է կոմմունայի տրամադրության տակ, նրա արժեքը հաշվում են վորպես փալավճար և ավանդ։

Կոմմունայի անդամներն ապրում են ընդհանուր շինություններում։ Առանձին ընտանիքներին կարելի լե առանձին բնակարտներ հատկացնել։

Կոմմունաներում շինվում են ընդհանուր խոհանոցներ, վորտեղ աշխատանքները կատարվում են կամ հերթով կամ նշանակովի։

Մարքավորված կոմմունաներում բոլոր անդամների համար ընդհանուր ճաշարան են շինում։

Բոլոր տեսակի կոլտնտեսություններն արտադրության մթերքների վաճառքը կոռակերտակավ հիմունքներով են կազմակերպում, շինում են գյուղատնտեսական մթերքների և հումքերի մշակման և վե-

բամաշկման ձեռնարկներ (աղացներ, տրնեսանոցներ, կաշվի, ձեթի, լուզ ու պանրի գործարաններ), կատարում են ընդհանուր հոգային տարածության մեջորացիա և անտեսության յեկամուտը բարձրացնելու այլ միջոցների դիմում:

ԱՅԻ ԵՇԱԽՆԵՐԻ ՄՐԳՈՅԻՆ ՁԵՆԵՐԻ ԲԵՑԽԱԽՄԸ

Կոլտնահամաթյունների տարրեր ահասկների համար աշխատանքի արդյունքների բաշխման կարգը տարրեր և որենքով բաշխման ճիշտ կարգ չեւ սահմանված:

Ընկերություններն առաջին հերթին ընդհանուր յեկամուտից մաս են հանում կոլտնահամաթյան պետքերի համար, իսկ մեացոն մասը բաշխում են անդամների միջի հետեւյլ ձեռքից մեկով, ա) ըստ շնչի կամ բ) ըստ յուրաքանչյուր անտեսության դրված աշխատանքի վորակի և քանակի և կամ գ) խառը կարդով: Կարող են և այլ պարմաններ հաշվի առնվել:

Առաջին դեղքում բաշխման նորմա յեն ծառայում շնչերը, և յուրաքանչյուր անտեսություն մթերք ստանում ե, նայած իր շնչերի թվին:

Եերկրորդ դեղքում հաշվի յեւ առնվում յուրաքանչյուր առանձին ընտանիքի աշխատանքը, հաշիվը կատարվում է որով կամ ժամով: Այդ հաշիվը կատարելիս նկատի յեւ առնվում աշխատանքի աբասպրոցականությունն ու վարակը: Արինակ՝ հասակավորի որակն աշխատանքը զնանառվում է մեկ սուրլի, անչափահասինը՝ 40—50 կոտկել:

Խառը ձեի կիրառման դեղքում յեկամուտի մի մասը, որինակ՝ 30-ից մինչև 50 տոկոս բաժանվում է

ըստ շնչի, իսկ մնացած 50-ից մինչև 70 տոկոսը համաձայն առանձին տնտեսությունների կողմից դրված աշխատանքի քանակի և վորակի: Արդյունքների բաշխման ալս խառը ձեն ամենից տարածվածն եւ:

Զիերի աշխատանքը և չհամայնացված գործիքների ոգտագործումը վճարվում եւ ընդհանուր յեկամուտից, ըստ մասնակցության չափի:

Բերված որինակները պարտադիր կանոններ չեն հանդիսանում. ընկերությունները կարող են ընդունել արդյունքների բաշխման այլ ձեեր և նորմաներ, վորհաստատվում են ընդհանուր ժողովի կողմից:

Յեկամուտների բաշխման այս կարգերը վերաբերում են միայն համայնացված աշխատանքին. դրանից զատ ընկերության անդամները կարող են դրամ աշխատել:

Դրսի աշխատանքի վարձը մտնում եւ անհատական յեկամուտի մեջ. ընկերությունն իր անդամի դրսի աշխատավարձից մաս կարող եւ ստանալ միայն այն դեպքում, յեթե դրսի աշխատանքը կատարվում եղաշտային աշխատանքների ժամանակ: Ընկերության ոգտին գնացող մասը ստհմանվում եւ ընդհանուր ժողովի հետ կայացրած համաձայնությամբ:

Արտելում լուրտքանչյուր ընտանիք մնում եւ առանձնացած, և նրա յեկամուտը կազմվում եւ ընտանիքի անդամների աշխատանքի վարձից:

Առանձին անդամների աշխատանքի վարձը վորոշվում եւ դրամական միավորներով: Բաշխման ձեերը հաստատվում են ընդհանուր ժողովի կողմից և կարող են, ինչպես ընկերություններում են տարբեր լինել:

Նկատի ունենալով, վոր արտելների համայնաց-

ված տնտեսության մեջ կատարվում են տեսակ-տեսակ աշխատանքներ, վարձատրությունը՝ կարող ե լինել տարբեր առանձին աշխատանքների համար, նայած նրանց կարեորության և բարդության: Որինակ, դաշտալին աշխատողի ամսական վարձը՝ կարող ե լինել 40 ռուբլի, անապահապահինը՝ 45, լուղաղործինը՝ 50, անչափահասներինը՝ համապատասխանորեն՝ պակաս:

Պահանջների բավարարման համար մթերքները արգում են անդամներին ըստ կարիքի չափի:

Արաելի բոլոր լիկամուտներից՝ ստացված միջոցների մի մասը զնում ե ընդհանուր տնտեսական կարիքների համար, մի մասն ել, համապատասխան հաստատված աշխատավարձի, որին ե անդամների անձնական տրամադրության տակ՝ դուրս գալով վիրցրտծ մթերքների արժեքը:

Կոմմունաներում վողջ լիկամուտը մտնում է ընդհանուր տնտեսության մեջ: Կոմմունալի վողջ ընակշությունն ողավում ե ընդհանուր, բոլորի համար միանման սննդից: Բացի այդ, միքանի կոմմունաներ տալիս են վոտնամաններ, հագուստ և բավարարում են բոլորի համար ընդհանուր այլ կարիքներ:

Առանձին անդամների անձնական պահանջներին բավարարելու համար միջոցների մի մասը բաժին ե հանդում և բաշխվում ե նայած աշխատանքի՝ քանակակին ու վորակին:

Կոմմունալայում բոլոր լիրեխանները գաստիարակվում են միասին, հատուկ նշանակված զեկավարի հըսկողության տակ և կրթություն ստանալու համար ողավում են կոմմունայի միջոցներից:

ԽԵԶՊԵՍ Ե ՏԵՐՎԱՆԻՄ ՑԵՑԵԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼՅՆՑԵ-
ՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Կոլտնտեսություններում տնտեսությունը տար-
վում և տնտեսական արտադրական պլանով, վորը
մշակվում և հաստատվում եւ ընդհանուր ժողովում:

Պլանով նախատեսվում են՝ տնտեսության ընդ-
հունուր ուղղությունը, կենզանի և անկենզան ինվեն-
տարի կարիքի, զանազան աշխատանքների հաշվառքը
և նրանց կատարման ժամկետները, բանվորական ուժի
բաշխումը:

Կոլտնտեսությունների բոլոր անդամները պար-
ագոր են աշխատանքներին մասնակցել, ամեն մեկին
աշխատանք եւ արվում համաձայն նրա ուժի, տողջու-
թյան, փորձվածության և այլ ունակությունների:

Ցեթե կոլտնտեսության անդամներից մեկն ու-
ժեկը կորցնում է իր աշխատունակությունը (հիվան-
դություն, հղիություն և այլն), նու ազատվում է աշ-
խատանքից, բայց իր աշխատավարձն ստանում է:

Անդամների միջև աշխատանքի բաշխումը կա-
տարում է կոլտնտեսության խորհրդինախազանը կամ
հատուկ նշանակված անձնավորություն:

Ցուրաքանչյուր անդամի կառարած աշխատանքը
հաշվի լի ամնվում ըստ քանտակի և վորակի:

Խորհրդին իրավունք է արվում առանց հարգելի
պատճառի աշխատանքից բացակազողին փոխարինելու
այլ անդամով կամ զբակից վարձվածով, ի հաշիվ աշ-
խատանքից բացակայողի:

Դործակքումի (պրոգուլի) և առհասարակ զեղի
գործն անբարեխիղ վերաբերմունք ցույց տալու հա-

մար տուպանք և զրվում և այլ տեսակի գանձումներ են տրվում՝ մինչև կոլտնտեսության անդամությունից հեռացնելը:

Առանձին հաջող և ջանասեր աշխատանքի համար աշխատավարձը կարելի յէ ավելացնել կամ պարզեաւարության ձևով հատուցաներ:

Կանալք և տղամարդիկ հավասար աշխատանքի համար հավասար վարձ են ստանում:

Անչափահասներին իրենց ուժից վեր աշխատանք չի կարելի թույլատրել. նրանց բանվորական որը կրծտանել, վորին համապատասխան իշնում և և աշխատավարձը:

ԿՈԼՏԵՍԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԶԱՑՆԵՐԸ

A 32/2
Կոլտնտեսությունների միջոցները կազմվում են անդամների մուծումներից, ավանդներից, տնտեսությունից ստացված լիկամուտներից, փոխառությունից և այլ աղբյուրներից:

Անդամագրման և փակի վճարներ կոմմունաներում մուծում են 16 տարեկանից վեր ըոլոր անդամները: Ընկերություններում և արտելներում փայտվճարակին անդամություն թույլատրվում և նույնպիս միայն հասակավորներից (տանտերերից). Փայտվճարակին մուծումները կարող են վոչ միայն դրամով կտարել, այլի համայնացման համար պետքական գույքով:

Անդամության և փայտվճարների մուծումներից գույք կոլտնտեսության մեջ զրված գույքավին և զրամական միջացներն ավանդներ են համարվում:

Ավանդների համար կոլտնտեսությունների ընդ-

հանուր յեկամուտից տոկոսներ են արվում, վոչ բարձր տեղական վարկային ընկերությունում ավանդների համար սահմանված տոկոսի չափից։ Ավանդների համար ուրիշ իրավունքներ չեն տրվում։ Ինչպես մուծումների, նույնպես և մասնատրումների՝ տոկոսները դրամագլուխների համար որենքով ճշգրիտ չեն սահմանված։ Իսկ սովորաբար՝ գոյություն ունեցող կոլտնտեսությունների պրակտիկայում սահմանվում են հետեւալ չափերը՝ 10—25 ռուբլի մուտքի վճար։ Փայտվարային մուծումները կոմմունաների և արտելների համար 100—200 ռուբլի, հողի համայնական մշակման ընկերությունների համար՝ 50—100 ռուբլի։

Տարբեր վայրերի համար չափերը տարբեր կարող են լինել, կապված լուրաքանչյուր առանձին դեպքում տվյալ զբանի չքավոր-միջակ անտեսությունների ապահովվածության աստիճանից։

Կոլտնտեսությունների միջոցները բաժանվում են՝ հիմնական (բաժանելի, անբաժանելի և զբաղված), պահեստի և հատուկ դրամագլուխների։

Բածանելի դրամագլուխը կազմվում է մուտքի և փայտվաճարների մուծումներից, ավանդներից և ոգուտի մասնատրումներից։

Անբաժանելի դրամագլուխն ստեղծվում է համայնացված միջոցներն ուժեղացնելու և կոլտնտեսությունների դրամագլուխներին մեծ կայունություն տալու համար։

Փեքածանելի գրամագլուխը կազմում է կոլտընտեսության ոգուտի տարեկան մասնատվությունից և պետական ու կոռպերատիվ անվերադարձ փոխառվությունից։

Անբաժանելի կապիտալն անդամի դուրս դաշտու կամ վտարվելու դեպքում, նույնպես և կոլտնտեսության լուծարքի դեպքում անդամների միջև չի բաժանվում:

Զբաղված զբամագլուխը ստեղծվում և կազմակերպություններից և հիմնարկներից ստացված լեռ-կարառե վարկերից:

Պահեստի զբամագլուխը կազմվում և կոլտնտեսության մաքուր ոգուտի տարեկան մասնաւոլությունից, ծածկելու համար տարբերակին՝ անբերքատվությունից, հրդեհից և կողովուտից առաջացող, ինչպես և տնտեսության վնասները:

Պահեստի զբամագլուխը՝ հիմնական զբամագլխի փակավճարային մասին հասնելու դեպքում, հետագա մասնաւոլությունները կարող են դադարեցվել:

Հասուկ զբամագլուխը կազմվում և ընդհանուր ժողովի հատուկ վորոշմամբ և ծախսվում և ձեռնարկ կտորուցելու, անտեսությունը լավացնելու և բարձրացնելու համար:

Բացի զբանից, տնտեսության ընդհանուր յեկամտի տարեկան մասնաւոլությունից ամորտիվացիոն ֆոնդ և տեղծվում դուրսի (շինությունների, անկենդանների և կենդանի ինվենտարի) մաշվածության չափի մեծությամբ:

Ամորտիվացիոն ֆոնդը ծախսվում և կապիտալ (հիմնական) վերանորոգումների և մաշված դուրսը նորով փոխարինելու վրա:

Ոգուտից մասնաւորումները սահմանվում են՝ բաժանելի զբամագլխին՝ $50-60\%$, անբաժանելի՝ $10-15\%$, պահեստի՝ $20-25\%$ և հատուկ՝ $5-10\%$:

Անբաժանելի դրամագլխից 20% մասնատրվում և
կոլտնտեսությանը՝ կոլխոզներին սպասարկելու համար:

ԵՐՑՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Կոլտնտեսական շարժման գարգացումը խրախուսելու համար և նոր սկզբունքներով կազմակերպվող միավորված տնտեսություններին ոգնելու նպատակով սահմանված են հետեւյալ արտոնությունները:

1. Հողաշինարարության դեպքում հատկացվում են վորակով լավ և հարմար ու գյուղին մոտ ընկած հողերը: Համայնքի անհամաձայնության դեպքում հողարաժանումը կատարվում եպարտավորական կարգով:

2. Պետական հողային գույքերի և հողային ֆոնդերի բաշխման դեպքում կոլեկտիվներն առաջին հերթին են հող ստանում:

3. Հողաշինարարությունը կատարվում ե հերթից դուրս, ձրի, պետության հաշվին:

4. Գյուղատնտեսական հարկի կոպարից (օկлад) 1929—30 թ. համար զեղչ ե արվում՝ կոմմունարներին 60% , արտելներին 40% և տնտեսության մի մասը համայնացրած ընկերություններին՝ 20% : Կոմմունաների և արտելների համար շնչին միջակից բարձր չեղամուտ ունեցող շրջանի կամ գավառի համար զեղչն իջնում ե — կոմունաներին կոպարից զեղչվում ե 30% , իսկ արտելներին՝ 25% :

5. Շինություններ կառուցելու և վերանորոգելու համար շինարարական փայտ իրենց կոլեկտիվներին ամբողջապես ձրի յե բաց թողնվում: Կոլեկտիվների առանձին անդամներին՝ շինություններ վերանորոգելու

համար՝ արվում և մինչև 75% զեղջ։ Վառելիքի համար կուտահսություններին զեղջ և արվում և նույնիսկ ձրի տրվում։ Փարտը բաց և թողնվում արտոնչալ ֆոնդից։

6. Հատուկ վարկեր են նշանակված։ Վարկերը տրվում են 40-ից մինչև 10 տարվա ժամանակով, տարեկան 4% ով։

7. Առաջին հերթին մատակարարվում են գլուղատնահսական մեքենաներով, սերմով և հանքալին պարաբաններով։

8. Նախապատվության իրավունք և արվում գլուղատնահսական կրթական հիմնարկներ մանելու։

9. Առաջին հերթին ստանում են գլուղատնահսական ունություն և կուլտուր-կրթական հիմնարկների սպասարկում։

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԸԶՄԸ

Կոլտնտեսությունները կազմվում են կազմակերպվող քաղաքացիների կոմմավոր համաձայնությամբ։

Կոլտնտեսությունների անդամները կարող են լինել 16 տարեկան հասակի հասած քաղաքացիները, ինչպես արդեն գլուղատնահսությամբ զբաղվողները, նույնպես և նրանք, վոր միայն նոր անցնում են գլուղատնահսական աշխատանքի կամ իրենց բանեցրած արհեստներով կամ ունեն գլուղատնահսության հետ։

Առևտրական հիմնարկներ ունեցողները, նույնպես և այլ կոլտնտեսության անդամներ յեղողները, անդամներ չեն կարող լինել։

Կոլտնտեսությունների մեջ կարող են մտնել գույնություն ունեցող վորեե մեկ հողացին համայնքի ան-

դամները։ Կատարելապես թույլատրելի յե կոլտնտեսություն կազմակերպել տարբեր գլուղերի բնակիչներից։

Նկատի ունենալով, վոր գլուղատնտեսական կոլլեկտիվները հանդիսանում են վոչ միայն կոռպերատիվ կազմակերպություններ, այլև միաժամանակ հողալին համայնքներ, այդ պատճառով ել կոլտնտեսությունների մեջ մասնակցություն են ցուց տալի փայալճարը մուծած անդամներից զատ նաև միավորների մեջ մտնող բոլոր հասունացած քաղաքացիները (հողամայնքի իրավասու անդամները)։

ԽՇՁՊԵՍ ԵՆ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԱԽՐՄ ԳՐՎԱՒԹ

Կոլտնտեսությունները մանողներն իրավունք ունեն դուրս գրվել իրենց ցանկությամբ, կամավոր, իսկ կոլտնտեսության մեջ հաստատված կարգերին չենթարկվողները և առհասարակ ի մսաս կոլտնտեսության աշխատողները, կարող են վտարվել ընդհանուր ժողովի վորոշմամբ։

Կոլտնտեսությունից իրենց կամքով դուրս լեկող կամ վտարված անդամներն իրավունք ունեն յետ ստանալու իրենց փայալճարները և ավանդները, բացառությամբ իր բաժին մնասը ծածկող մասից, յեթե կոլտնտեսության մեջ մնաս և տեղի ունեցել։

Մուտքի (անդամության) վճարները չեն վերադարձվում։

Կոլտնտեսությունների հողոգտագործմանը կայունություն տալու նպատակով, դուրս լեկող անդամներին

հողաբաժին հանելը թույլատրվում և վոչ շուտ կանոնադրության մեջ ցուց տված ժամկետն անցնելուց:

Այդ ժամկետը յերեք տարուց պակաս չի կարող լինել, հաշված կոլեկտիվ մտնելու պահից:

Հողաբաժինը յետ ստանալու անհրաժեշտ պարագանն և հանդիսանում այն կատարել առանց խանգարելու ցանքսաշրջանառությանը և առանց եյական վետ հասցնելու կոլտնտեսությանը: Յեթև կոլտնտեսությունը բոլորովին լուծարքի յեւենթարկվում, կոլտնտեսությանը բաժնետրված հողաբաժնի վեց տարվա ժամկետը չանցած, առաջ հողը հետ և դարձվում հողային համայնքին, իսկ լուծարքին յենթարկված կոլտնտեսության անդամները մտնում են հողային համայնքի մեջ, անկախ նրա համաձայնությունից:

Այն հողամասերը, վորոնք տրված են կոլտնտեսություններին պետական հողային գույքերի բաժնից, անդամների գուրս գալու զեղքում չեն բաժանվում:

Կոլտնտեսության լուծարքի զեղքում նման հողերը հողմարմինների անորինության տակ են մըտնում:

ՀԻՄՆԵԴՐՈՂՆԵՐ

Կոլտնտեսություն կազմակերպող անդամները կոչվում են հիմնադրողներ: Հիմնադրողներ չեն կարող լինել անշափահասները և ընտրական իրավունքից զըրկվածները: Հիմնադրողների թիվը 5-ից պակաս չպետք է լինի*), բայց այդ թիվը մեծացնելու արգելք չկա:

*) Նոր հողային կողեքսի նախագծի համաձայն հիմնադրողների թիվը 10-ից վոչ պակաս և սահմանված:

Յեթե անդամների մեջ կան այնպիսի անձնավորություններ, վոր իրար հետ ամուսնական կտապի մեջ են գտնվում, նույնպես ծնողներ և վորդիներ, յեղբայրներ ու քույրեր, պապ և թոռ են, ապա նրանցից հիմնադրողների մեջ ե հաշվվում, յուրաքանչյուր առանձին դեպքում, միայն մեկը:

Հիմնադրողները կազմակերպվող կոլտնտեսության գործերը վարում են ժամանակավորապես, մինչև կանոնադրության տոմարագրվելը, վորից հետո վարելու գործն անցնում է ընդհանուր ժողովի կողմից ընտրված վարչության կամ խորհրդի անդամներին:

Կոլեկտիվի տոմարագրումից հետո հիմնադրողները մտնում են անդամների կազմի մեջ և մյուս անդամների և նոր անդամագրվածների նկատմամբ վոչ մի նախապատվությունից և արտոնությունից չեն ողտվում:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉՅԱՆ ԺՈՂՈՎ

Կոլեկտիվ տնտեսություն կազմակերպել ցանկացող և այդ մասին համաձայնության յեկած քաղաքացիները կայացնում են ժողով, վորտեղ՝ ա) հաստատվում ե կոլտնտեսության տեսակը—կոմմունա, արտել կամ ընկերություն, բ) քննարկվում և ընդունվում ե կանոնադրությունը, գ) առաջ են քաշվում հիմնադրող անդամներ կանոնադրությունը ձեւակերպելու համար, դ) սահմանվում ե մուտքի և փայտավճարների չափը, ե) քննարկվում ե իրենց բաժին տրվելիք հողաբաժնի անդի խնդիրը և այլ խնդիրներ, վոր կապված են կազմակերպման հետ:

Ընդունված վորոշումները մտցվում են համախոսականի մեջ, վորը կոչվում ե հիմնադրական:

SEARCHED

Դեռևս ենք համոխոսականի մի նմուշ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ

“...” 193 Г. Улья

Ներքու սովորական քաղաքացիներու սպառականութեացիներու սպառականութեացիներու

գլուզիասընդհանուր գլուզիա գլուզիա

ցանկանութեավ կազմակերպելու դիւ-

զատկան առաջարկությունը կատարելու համար միավորում,

կոլլեկտիվի անդամներով, վորոնցից անդամ ոռ-

աըվում են հիմնադրադների իրավունքներով, քննելով

կոլլեկտիվ անտեսության առավելությունները մեղ

առ զիւնըցւ ուստի չպապակապրօնան համ համապատասխան՝ միաժամկետ վառաշեղնք:

1. Կաղմակերպել կոլիեկտիվ անտեսություն դրու-

պատճենահանձնութեան տեսակի, վորին

“I am a man,” he said.

3. Ըստամերի կազմի մեջ նու մտելու կցված ցուռ-
ական մ հետապնդութ բառը բառենիկուր

3. Կոլանանեսությանը կազմակերպվում է անդամ-

ներին բաժին հասնալ հողում,

Նեկատը ընդհանուր տարածությամբ:

Հողածառ համելացիներու ամենահարմար տեղ համարենք (այս ինչն)։

անունով հայանի հողերը:

4. Մուտքի վճար սահմանել ռուբլի և փայտավար մուծել ռուբլի յուրաքանչյուր անդամից: Սակավազոր տնտեսություններին թույլատրել մուծումներ վճարել մաս-մաս տարում:

5. Տվյալ ժողովի կողմից քննված կանոնադրությունը ճանաչել ճիշտ կազմված և ամբողջությամբ ընդունել:

6. Կանոնադրությունն ստորագրելու և կոլեկտիվի ձևակերպման գործը վարելու համար հիմնադիր անդամներից առաջ քաշել ա) բ) գ) դ) ե) բ)

7. Հողաշինարարության վերաբերյալ հողմարմինների առաջ միջնորդություն հարուցել:

8. Համայնացված հողում տանել բազմադաշտայն ցանքաշրջանառություն, համաձայն շրջանակին գյուղատնտեսի պլանի և ցուցմունքների:

9. (Մնացած պայմանները, վոր ժողովը կգտնի կարևոր, մուցնել համախոսականի մեջ):

(Մասնակցողների ստորագրությունները)

Ժողովի նախագահ՝

Քարեուղար

ԿՈՂՑՆԵՑԵՍՈՒԹՅԱԽՆՆԵՐԻ ՁԵԼԱԿԵՐՊԳՈՒՄԸ

Կոլեկտիվը որինականորեն կազմակերպված համարվում և կանոնադրությունը տոմարագրելու որից:

Տոմարագրման նպատակն է պահպանել կազմակերպման կանոնավորությունը գործող որենքների

նկատմամբ և հաշվի առնել առաջացող կոլեկտիվները:

Ստեղծելով բարենպաստ պայմաններ դյուզացիա-
կան չքսվոր և սակավադոր միջակ խռովերի գարդաց-
ման համար, պետությունը չի կարող թուլաւրել կու-
լակտին տարրերին ծածկելու իրենց շահագործական
տնտեսությունը կոլեկտիվի ձևով, այդ պատճառով ել
տոմարագրող մարմնի վրա պարտականություն և ընկ-
նում ստուգման բնիթարկել կազմակերպությունը նաև
նրա անդամների գասակարգավիճն կազմի տեսակետից:

Կուլակալին կեղծ կոլանտեսությունների կազ-
մակերգման դիմ պայքարելու համար չի թույլատրվում
միացումներ կատարել միայն մոտիկ աղջականներից,
նմանապես չի թույլատրվում իրավունքից զբկված
անձնավորությունների մասնակցությունը դեկտիվարող
մարմինների և հիմնագրողների թվում:

Նկատի ունենալով տոմարագրման խնդիրների
լրջությունը և գրանով կանոնադրության հաստատ-
ման խոշոր նշանակությունը, տոմարագրող հիմնար-
կին անհրաժեշտ և ունենալ մանրամասն տեղեկու-
թյուններ կազմակերպվող կոլտնտեսության մասին։
Դրա համար ել կազմակերպողներին հարկավոր և
ներկայացնել լրիվ կարգով, որենքով պահանջվող բո-
լոր փաստաթղթերը, հակառակ պարագայում հիմնարկ-
ները գրված կլինեն դժվարին պարմաններում, վորի
հետեանքով տոմարագրման աշխատանքի մեջ ուշա-
ցում կառաջանա:

Կոլեկտիվների ձեռվորման համար անհրաժեշտ
են հետեյալ փաստաթղթերը.

1) Կանոնադրությունը յերեք որինակից, 2) հիմ-
նագրողների անունները, 3) աեղեկանը հիմնադրս

ների ընտրական իրավունքի մասին, 4) տեղեկանք ազգակցական հարաբերությունների մասին, 5) տեղեկություններ անդասների գույքային պրության մասին, 6) հիմնադրման համախոսական:

Բոլոր այս փաստաթղթերը պետք են բավարարեն ձեւական պահանջներին, ունենան համապատասխան ստորագրություններ պատշտամավոր կերպով վկարված, հասկանալի ձեռադրով, մասնավորապես կանոնադրությունները բաժան-բաժան թղթի կտորների վրա չպիտի լինեն:

ԿԸՆՈՒՑԴՐՈՒԹՅՈՒՆ

Կոլեկտիվի վողջ կազմակերպությունը և պորտունեկությունը, նրա իրավունքները և պարտականությունները վորոշվում են կանոնադրությամբ: Կանոնադրությունը կոլեկտիվի համար մի տևողական գործի նշանակություն ունեցող հիմնական փաստաթուղթ եւ Այդ պատճառով ել կանոնադրությունը մըտածված և ճիշտ կազմելը մեծ նշանակություն ունի:

Յուրաքանչյուր կոլեկտիվի կանոնադրության մեջ պետք են մատնանշված լինեն՝

ա) կազմակերպության անունը,

բ) այն ռայոնը, վարչին սպասարկում և կազմակերպությունը, և վայրը, ուր գտնվում են վարչությունը,

գ) կազմակերպության նպատակը, նրա գործարքները և դործունելության ժամկետը, յեթե կազմակերպությունը հիմնադրվում է վորոշ ժամկետով.

դ) անդամներ ընդունելու, նրանց դուրս դալու և վտարվելու պարմանները.

ե) անդամների պատասխանագությունը կազմակերպության պարտականությունների հանդեսուն:

դ) դրամագլուխներ կազմակերպելու պալմանները և կարգը, ինթե կանոնադրությամբ դրամագլուխներ նախատեսված են:

է) փալավճարի և մուտքի վճարի չափը, յեթե փայտվճարները և մուտքի վճարները սահմանված են.

ը) այլ պարտադիր մուծումների չափերը.

թ) հաշվեավություն կազմելու ժամկետը և ձեր, նրա ստուգումը և հաստատումը.

ժ) ոգուածի և մասների բաշխման կարգը.

ժա) ընդհանուր և լիազորական ժողովների հրամիրման կարգը և ժամկետը, նրանց աշխատանքի և արձանագրություններ կազմելու կարգը.

ժբ) վարչության, վերստուգիչ հանձնաժողովի և խորհրդի լիազորության սահմանը, յեթե խորհուրդը հաստատվում ե, հիշյալ մարմիններից լուրաքանչյուրի անդամների թիվը, նրանց ընտրության կարգը և լիազորության ժամկետը.

ժգ) կազմակերպության լուծուրքի պալմանը և կարգը և

ժդ) կանոնադրության փոփոխման հարցը.

Բացի այդ, պարտադիր կետերի կանոնադրության մեջ կարելի յեւ մտցնել ուրիշ վորոշումներ ևս, վարժնք վարչում են կազմակերպության հարաբերությունները սեփական անդամների և այլ անձնավորությունների ու հիմնարկների նկատմամբ:

Կանոնադրությունները կարող են գրված լինել ձեռքով, բայց ավելի լավ ե այդ նպատակի համար ձեռք բերել գրքույի կանոնադրության ապագրված որինակով:

Գրքուլկները կարելի յե ձեռք բերել գլուզաւտնաւեների մոտ, գլուզիսորհրդներում, սպասողական կոռպերացիալի խանութներում կամ դուրս դրել “Книгосоюз”, (Москва, Центр, Манежная, 17), “Госиздат”, (Москва, Центр, Рождественка, 4) հրատարակչություններից կամ նրանց բաժանմունքներից:

Կանոնադրություններ դուրս դրելիս ճշգրիտ պետք ե սույց տալ կողեկտիվի տեսակը – կոմմունալ յե, արտել, թե հողի պայմանական մշակման ընկերություն, քանի վոր յուրաքանչյուր տեսակի կոլտընտեսության համար կանոնադրության վորոշ ձև դություն ունի:

Մեկ որինակի արժեքը 10 կոպեկ եւ:

Տպագրված կանոնադրություններում բաց բողած տեղեր են լինում, վորոնք պետք ե լրացվեն, իսկ լեթե հարկ լինի լրացումների և փոփոխումների, վորոնք չեն հակասում որենքին, դրանք պետք ե գըրվեն մինչև ստորագրելը կանոնադրության վերջում բառ առ բառ: Կանոնադրությունը կազմվում ե յերեք որինակից: Յերեք որինակն ել պետք ե լինեն միատեսակ և ստորագրված թվով վոչ պակաս, քան հինգ հոգի լիազոր հիմնադրողների կողմից: Պետք ե ստորագրել ազգը, անունը և հայրանունը: Մյուս հիմնադիրների ստորագրությունները պարտադիր չեն:

Կանոնադրությունների վրա յեղած ստորագրությունները վկայելու և հաստատելու կարիք չկա:

ՅՈՒՑԱՆԵՐ ՅԵԼ ՏԵՂԵԿԱՑՆԵՐ

Գոյություն ունեցող կանոններով կոլանտեսությունը ձևավորելու համար պահանջվում ե՝

1. Հիմնադիրների ցուցակը, նրանց կողմից սեփական ձևոքով ստորագրված՝ անունով, հալրանունով, ազգանունով, մատնանշելով, թե վորտեղ և ապրում ենչով և զբաղվում:

2. Գյուղխորհրդի կամ շրջգործկոմի կողմից հաստատված տեղեկանքն այն մասին, վոր հիմնադրողները խորհուրդների ընտրության իրավունք ունեն:

3. Գյուղխորհրդի կամ շրջգործկոմի տեղեկանքը այն մասին, վոր հիմնադրողներն իրար հետ ամուսնական դրության կամ մոտիկ ազգակցության մեջ չեն դանվում:

Ձեակերպումը հեշտացնելու համար այդ բոլոր փաստաթղթերն ու տեղեկությունները ցուցակում տեղադրվում են հետեւալ եջում ցույց տրվող ձևով՝

Կազմակերպվող կոլտնտեսությունները և նրանց անդամների գույքային դրությունը՝ գասակարգավիճ պատկանելիության կողմից դնահատելու համար, հողմարմիններին անհրաժեշտ են, բացի վերև հիշված փաստաթղթերից, նաև շրջգործկոմների և գյուղխորհրդի կողմից վկարված այն տեղեկությունները, վոր բհրդական են 33-րդ եջում:

ոկրութիւն (նաևանդի) ՀՀ վահանգիւթեայի բարեկարգութիւնը

Ազգային մասնակիություն, պահանջման համար պահանջման մասնակիություն	Բնակչության գումարը	Համարված բնակչության գումարը	Հիմնարկության գումարը
ՀԱՅՐԱՆՈՒԹՅՈՒՆ			

卷之三

45

ԱՐԴՅՈՒՆԵԼԻ ԱՎԱՐԱՐԵՄՆԱԿԱՐՏ

二三

卷之三

		Դադուն Գլուխքը և մայումը՝ ովուոր ուու թիւավելուտիւուն ովին -ունմակուուն Ամպուշտին -ռուսաւուկը վիճակուն -եւուն բակ վրակ գմանց է
		Ավուն վիճակ ուուկուուդաւուն ուունց
Ճ	Ճ	Ճաղչամաչասի ու ճախաւուզմուն
Ճ	Ճ	Ճախսի ուութի
Ճ	Ճ	Ճաղչեսնգուն կու -ուց ուուկումախուց
Ճ	Ճ	Ճաղ կուղչաս -ուսին Յինցտունզ
Ճ	Ճ	Ճիգը վճաղաւեցն
		Ճաշակահետ ու Ճաշակամ -եւց Ճաշակա ճամփատուց
		Ճեմուկ առաջ Ա Ա

*Slaghetton, Fornace, S. G. M. P. (2002) *Qualitative methods in educational research*. London: Sage.*

卷之三

८५

Ցուցակում գրում են կոլտնտեսության մեջ մըտ-
նող բոլոր տնատերերի, վորոնց թվում նաև վոչ հիմ-
նադիրների անունները:

ՀԱՅՅԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՏՈՄԾՐԱԳԲՄԱՆ ՄՅՈՒՆ

Տոմարագրման մասին հայտարարությունը բոլոր
հարակից թղթերով տրվում է գավիռողվարչության:
Հայտարարությունը տրվում է հիմնադիր անդամների
լիազորվածների անունից և պետք է ստորագրված
լինի այն անդամների կողմից, վորոք ստորագրել
են կանոնադրությունը, թվով հինգ մարդուց վոչ
պակաս:

Հայտարարության տակ յեղած ստորադրություն-
ները պետք է վկայված լինեն շրջգործկոմի կամ գլուղ-
խորհրդի կողմից: Հայտարարության մեջ պետք է մատ-
նանշված լինի այն անձնավորությունը և նրա հաս-
ցեն, վորը լիազորված և տոմարագրման վերաբերյալ
թղթեր ստանալու:

ՀԱՅՅԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆՄՈՒՆ

Ցերեանի գավառակին գործկոմի Հողային բաժնին
Նորագավթի գյուղինորհրդի «Նոր Ռւզի» գյուղա-
տընտեսական արտելի հիմնադիրներ՝

1. Թաղ. Հովհաննես Ռաֆայելի Սողոմոնյանից
2. » Կարապետ Թոմասի Սաղաթելյանից
3. » Սամսոն Թաթուլի Հովհաննիսյանից
4. » Ռեհան Սարգսի Թահրաղյանից
5. » Աղասի Կարապետի Յեսականից, վորոնք
ապրում են Նորագավթի գյուղում.

Հայուարտություն

Աւղաբկելով ռնոր Աւղիս արտելի կանոնադրությունը յերեք որինակից, հիմնագիրների ցուցակը, Նորագավթի գյուղխորհրդի վկալականը առ այն, վոր հիմնադիրները խորհրդների ընտրելու իրավունք ունեն, և տեղեկանք այն մասին, վոր հիմնադիրներն ազգակցական հարաբերությունների մեջ չեն, իւրնդրում ենք կանոնադրությունն մացնել գյուղատնտեսական կոոպերատիվ միությունների մատրանի մեջ։

Այս հայտարարությունը ներկայացնելու և տոմարագրված կանոնադրությունն ստանալու լիազորում ենք Յերեան քաղաքում, Ռուբենի փ. № 2 տանը բնակվող Արտաշես Առաքելի Պետրոսյանին, վորի հասցեյով խնդրում ենք ուղարկել մեզ վերաբերող բոլոր զբությունները։

Արելի նիմնա- դիրներ	<div style="display: flex; align-items: center; justify-content: space-between;"> <div style="flex-grow: 1; margin-right: 10px;"></div> <div style="font-size: 2em; color: #000080;"> </div> <div style="flex-grow: 1; text-align: right;"> Հովհաննես Ռաֆայելի Սովոմոն- յան, Կարապետ Թոմասի Սա- դաթելյան, Սամսոն Թաթուլի Հովհաննիսյան, Ռեհան Սարգսի Ֆահրադյան, Աղասի Կարապետի Ցեսարյան։ </div> </div>
------------------------	---

Նորագավիթ գյուղում ապրող քաղաքացիներ Հովհաննես Սովոմոնյանի, Կ. Սաղաթելյանի Ա. Հովհաննիսյանի, Ռ. Ֆահրադյանի և Ա. Յեսայանի սեփական ստորագրությունները Նորագավիթի գյուղխորհրդության հաստատում են։

Կ. Տ.

Նախագահ՝ Յեսայան Ա.
Քարտաւղար՝ Սաներոսյան Ա.

Կոլլեկտիվներ կտղմակերպելիս, յերբ հիմնադիրների թիվը շատ չե, ձևակերպումը դյուրացնելու համար հայտարարությունը կարող են ստորագրել բոլոր հիմնադիրները, իսկ խորհուրդներում ընտրելու իրավունքի վկայականը և ազգակցական հարաբերությունների մասին տեղեկանքը կարելի յե տեղափորել հայտարարության մեջ հետևյալ ձևով.

Գյուղխորհուրդը վկայելով
գյուղի քաղաքացիների ստորագրությունները, հաստատում և վոր թված քաղաքացիները խորհուրդների ընտրության իրավունք ունեն և իրար միջև մոտիկ ազգակցական դրության մեջ չեն դժոնվում (ամուսիններ, ծնողներ և վորդիներ, յեղբայրներ և քույրեր, պապ և թոռը չեն):

Կ. 8.

Նախագահ՝

Քարտուղար՝

Այդ դեպքում հիմնադիրների առանձին ցուցակ կտղմելու կարիք չկա: (Նայել յերես 32):

Փաստաթղթերը վկայում են կամ շրջգործկոմի կամ գյուղխորհուրդի կողմից նախած հաղորդակցության հարմարությանը և այս կամ այն հիմնարկի մոտիկ լինելուն:

Կոլլեկտիվների ձևակերպման փաստաթղթերը նույտարակին և դրոշմանիշալին գանձումներից ազատվում են:

ՏՈՄՈՒՐԾԴՐՈՒՄ

Գյուղատնտեսական կոոպերատիվ միավորութենքի (կոլլեկտիվատություններ) կանոնադրությունների տամարադրումը կատարում և գալիճողվարչությունը, իսկ

ուսյանացման շրջաններում՝ շրջպոբձկոմները։ Տուարագրող մարմինները ուաբառավոր են մի ամսվա ժամկետում կամ տոմարազըել կամ մերժել։

Յեթի մի ամսվա ընթացքում վոչ մի վորոշում չկարոցվի, ապա անպայման կանոնադրությունը պիտք է տոմարազըին։

Ժամկետը հայվուում և հիմնարկության կողմից հայտարարությունն ստանալու որից։

Յեթի հայտարարությունը բոլոր պահանջվող փաստաթղթերը կցված չեն և կամ նրանք գոնվեն վոչ ճիշտ կազմած, ապա տոմարազըման մասին տըրդում հայտարարությանը ընթացք չի տրվում, արդ մասսին հազորդվում և հիմնարկներին, և մեկ ամսվա ժամկետը հաշվառմ և վոչ թե հայտարարության տըրդում որից, այլ ուղղված կամ պակասող փաստաթղթերի ստոցման որից։

Տոմարազը կարող են մերժել այն դեպքում, յեթի կազմակերպության ներկայացրած կանոնադրությունը չի համապատասխանում որինքի պահանջներին, կամ յեթի կոլունակության կազմը չի բավարարում դասակարգաչին պահանջներին։

Տոմարազըման մերժման մասին վորոշումը կարող և բօղոքարկիլ մեկ ամսվա ժամկետում պատճեննը ստանալու որից։

Գավիճաղվորչության վարչման առթիվ բողոքը արվում և նահանգային հողային վարչության, իսկ շրջործկոմի կայացրածի համար՝ ոկրուզային հողավարչությունը։

Բողոքները արվում են այն հիմնարկի միջոցով վարը մերժել և տոմարազըլու։

Կանոնադրության հաստատման որից կոլեկտիվը
համարվում է որինականապես կազմակերպված և ստա-
նում է իրավական դեմքի իրավունքները, նույնպես
արտոնությունների և նախապատվության իրավունք-
ները, կանոնադրության տոմարադրման հետ միաժա-
մանակ տոմարագրվող մարմինը նոր կոլտնտեսության
մասին հաղորդում է Գյուղատնտեսական կոլեկտիվ-
ների Միությանը, կոլեկտիվը միության մեջ ընդու-
ռելու համար միջոցներ ձևանարկելու, նույնպես հո-
ղաշինարարական բաժինը՝ հող հատկացնելու և կոլ-
տնտեսության հողերը դաշտերի վերածելու համոր:

Կանոնադրության տոմարագրությամբ կոլտնտե-
սության ձևակերպումը վերջանում է, բայց կազմա-
կերպումը դրանով վերջացած չպետք է համարել: Ստեղծ-
ված կոլտնտեսությունները, առավել ևս մանրերը,
յեթե իրենց բախտին թողնվեն, լրիվ չափով չեն կարող
ստանալ այն ոգուտները, վոր կարող են ունենալ ա-
վելի խոշոր և լայն միավորումների, ուստի նոր կազ-
մակերպված կոլտնտեսությանն անհրաժեշտ է մտնել
գյուղատնտեսական կոլեկտիվների միության մեջ,
վորի համար ել հարկավոր և հայտարարություն տալ:

Միության մեջ չնշանակ կոլտնտեսությունները
«վայրենի» յեն կոչվում:

Եեթե հողերի դասավորությունը հարմար է, այդ
դեպքում հարկավոր է խոշորացնել միքանի կոլեկ-
տիվներ միացնելով:

Մի վորեե շրջանի սահմաններում գտնվող կոլ-
տնտեսությունները կամովին սկզբունքներով կազ-
մում են խմբակացին միավորներ:

Խմբակացին միավորները կազմակերպվում են

միասնաբար, բարդ գյուղատնտեսական մեքենաներ ձեռք բերելու և ոգտագործելու ոժանդակող ձեռնարկներ կառուցելու և վերանորոգման արհեստանոցներ կաղմակերպելու համար։

ՊԾՐԶ ԴՅՈՒՊԸՑՆՑԵՍԸԿԵՆ ԿՈՈԳԵՐԸՑԻՎ ՄԻԸԸԱԲՆԵՐ

Կոլտնտեսությունները (կոմմունաները, արտեկները և հողի համալսարական մշակման ընկերությունները) հանդիսանում են բարդ միավորներ՝ զլուղատնտեսական բազմադասն գործունելությամբ։ Կոլտընտեսություններից բացի դուրս ունեն զլուղատնտեսական կոոպերատիվներ վորեն մեկ մասնավոր գյուղատնտեսակատն գործունելությամբ։ Պարզ կոոպերատիվ միավորներին վերաբերում են տարրեր անուններ ունեցող հետեւալ ընկերությունները։

1. Մելենային քնկերությունները, կաղմակերպվում են միասնաբար զլուղատնտեսական մեքենաներ ձեռք բերելու և ոգտագործելու համար։

2. Մելիքորածիկ քնկերություններ հողբարելավումների համար՝ չորացում, վոստօնում, խիճերից մաքրել, կոճղերը հանել, անպետք բուսականությունից մտքրել և ալյումին շարունակ։

3. Ջերաբճակեցման նպաստելու՝ զաղթելու գործին և նոր վայրերում անահտություններ կաղմակերպելու համար։

4. Անասնաբուծական (ձիաբուծական, վոչխարաբուծական, խոզաբուծական և ուրիշները) ձիերի և խոշոր ու մանր անաստելություններ կաղմակերպելու համար, աղնվացեղ արտադրողներ ձեռք բերելու հանապարհով,


կանոնավոր կերակրելու և մատղաշ անասունների կազմակերպված վաճառքի համար:

5. Մեղվաբուծական, յուղագործական, պանրագործական արտելներ, այսուրավաց ընկերություններ և ուրիշները՝ գյուղատնտեսական և անասունապահուկան մթերքների վերամշակման և վաճառքի համար:

Այլ՝ գյուղատնտեսական առանձին ճյուղերի բարելավմանն ուղղած ձեռնարկեներ իրակործելու համար կազմակերպվում են սերմնաբուծական, մեղվաբուծական և ալլ ընկերություններ:

Թված ընկերությունների, կուղմակերպման և ձեռվագործան կարգը նույնն է, ինչ վոր կոլտնտեսությունների համար, այն տարբերությամբ միայն, վոր մինչդեռ կոլտնտեսություններ կազմակերպելու համար պահանջվում է հնգիս վոչ պահան հիմնադրող անդամ, միացած տեսակի գյուղատնտեսական կոոպերատիվների համար ողիտք և տասը հոգուց վոչ պակաս հիմնադիր անդամ:

Դրա համար ել հրահանգի մեջ բնելված ձեռակերպման կարգը և փաստաթղթերի ձեզ կարող են ողաագործվել համապատասխան փոփոխություններով և պարզ կոոպերատիվ միավորութենքի կազմակերպման դեպքում:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038359

1084

ԳԻՆՅ 10 ԿՈՊ. 70% (1 $\frac{1}{4}$ մամ)

A 1
3717



А. Бонрский и А. Коршик

Организация и оформление колхоза

Госиздат ССР Армении
Эривань—1930